

**ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐԻ («ԴԵԴԵ ՔՈՐՔՈՒԹ» ԵՎ «ՔՅՈՈՕՂԼԻ»)
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՊՀ
ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԲԻՈՆՈՒՄ**

Ռամազյան Սամվել

բանասիրական գիտությունների թեկնածու, ասիստենտ

Երևանի պետական համալսարան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայաստանի Հանրապետություն

samvel.ramazyan@ysu.am

<https://orcid.org/0009-0007-1782-4777>

Ամփոփում

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում, Թյուրքագիտության ամբիոնի հիմնադրումից սկսած, որոշակի տեղ է հատկացվել թյուրքական էպոսների ուսումնասիրությանն ու ուսուցմանը, ինչն իրականացվել է թյուրքական գրականության դասավանդման շրջանակում:

Որևէ ազգային էպոս վստահաբար կարող է կազմել գրականության հիմքը: Թյուրքական էպոսներն այդ տեսանկյունից բավական մեծ ազդեցություն են ունեցել թյուրքախոս ժողովուրդների գրականության հիմնավորման գործընթացում՝ հաշվի առնելով բանավոր խոսքի ու մշակույթի բազմադարյան ավանդականությունը: Միաժամանակ դրանք տակավին շարունակում են պայմանավորել ազգային մշակույթային ու ինքնության ձևավորման գործընթացը որոշ թյուրքախոս ժողովուրդների շրջանում՝ ընդամին, հանդիսանալով յուրօրինակ ազգային խորհրդանիշներ: Մասնավորապես, «Դեդե Քորքուլը», լինելով թյուրքական տարբեր էթնիկ խմբերի ազգածին էպոսը, մինչ այժմ էլ կարևորագույն դեր է խաղում համաթյուրքականության գաղափարախոսության հանրայնացման առումով, բնականաբար, երբեմն նաև զանազան ազգային տարբերակների արհեստական համահարթեցման ու նույնացման ճանապարհով: Ավելի ուշ ժամանակահատվածում ստեղծված ու ձևավորված «Քյոռոզլի» էպոսն առավել մեծ թվով ազգային տարբերակների առկայության հաշվառմամբ այլևս չունի այն խորհրդանշական համաթյուրքական նշանակությունը, որը վերագրվում է «Դեդե Քորքուլին»: Սակայն որոշ դեպքերում այն իր հերթին ևս պարփակում է ազգային ինքնաճանաչողության տարրեր, իսկ երբեմն՝ նաև դիտարկվում միևնույն հարթությամբ:

Վերոհիշյալ տեսակետներից, մասնավորապես, հայկական թյուրքագիտության համար թյուրքական ոչ միայն նշված, այլև մյուս էպոսների ուսումնասիրությունն ու համապատասխան մեթոդաբանությամբ դասավանդման արմատավորումը ներկայացնում են անհրաժեշտություն, ինչը, վստահաբար, կարող է ունենալ գիտական ու գործնական-կիրառական նշանակություն:

Հոդվածը պատրաստվել է վերջին տարիներին թեմայով իրականացված մեր հետազոտությունների արդյունքների ամփոփման, ընթացքում կատարված եզրահանգումների ու դիտարկումների հիմքով: Թեմայի առնչությամբ նկատելի խնդիրներից է դրա ներկայացումն առանց հայկական միջավայրի և հայկական վիպական ենթաշերտի վերհանման, ինչը բնորոշ է արտերկրի թյուրքագիտական կենտրոններին, սակայն

մեր դեպքում առկա առանձնահատկությունների և արդեն իսկ արձանագրված արդյունքների հաշվառմամբ մինևս մոտեցման կիրառումն արդարացված ու արդյունավետ չէ: Տվյալ համատեքստում կարևորվում է թյուրքական լեզուների, ինչպես նաև հայ բանահյուսության առնչությամբ որոշակի գիտելիքների իմացությունը: Ըստ այդմ առարկան վստահաբար կարող է ունենալ միջգիտակարգային նշանակություն:

Թեմայի առանձնահատկությունների և արձանագրված խնդիրների վերհանմամբ ներկայացվում են դասընթացի դասավանդման համար անհրաժեշտ մեթոդական մոտեցումները: Առարկայի դասավանդման վերջնարդյունքում թյուրքագետ ուսանողը կարող է առավել ամրապնդել այնպիսի ունակություններ, ինչպիսիք են թեմայի խորքային իմացությունը, տարաբնույթ տվյալների համակողմանի վերլուծությունն ու համադրումը:

Բանալի բառեր՝ *թյուրքական էպոս, թյուրքագիտություն, «Դեդե Քորքուր», «Քյոռոզլի», Հայկական լեռնաշխարհ, դասավանդում, առանձնահատկություններ և մեթոդներ:*

Արդիականությունը: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է դասընթացի մշակմամբ ու ձևավորմամբ, ինչը հնարավորություն է ընձեռում արդի ժամանակահատվածում արմատավորել թյուրքական էպոսների դասավանդումն ընդհանուր թյուրքագիտության շրջանակում:

Նպատակը: Հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնելու թյուրքական էպոսների դասավանդման առանձնահատկությունների ու մեթոդների վերլուծությունը՝ հիմնվելով վերջին շրջանում իրականացված հետազոտությունների արդյունքների վրա:

Նորույթը: Հոդվածը դիտարկելի է որպես գիտական նորույթ, քանի որ հետազոտական նման բնույթի աշխատանք հայաստանյան իրականության մեջ մինչ այժմ չի արձանագրվել: Ըստ այդմ՝ առաջին անգամ փորձ է արվել ներկայացնելու և դասակարգելու դասընթացի առանձնահատկություններն ու մեթոդաբանությունը: Վերհանվել են այն կարևոր առանձնահատկությունները, որոնք առավել արդյունավետ կարող են դարձնել թեմայի դասավանդումը ԵՊՀ-ում և, ընդհանրապես, հայկական միջավայրում, ինչպես նաև թեմային հայ թյուրքագիտության համապարփակ մոտեցումների ձևավորումը հետագա ժամանակահատվածում իրականացվելիք ուսումնասիրությունների ու արտաքին լսարանում դրանց հանրայնացման աշխատանքների հաշվառմամբ:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների համառոտ նկարագիրը: «Դեդե Քորքուր» էպոսի թեմայով աղբյուրագիտական առանձնակի նշանակություն ունեն ռուսական ու խորհրդային թյուրքագիտության դպրոցի նշանավոր ներկայացուցիչների, մասնավորապես, Վ. Վ. Բարտոլդի, Վ. Մ. Ժիրմունսկու և Ա. Ն. Կոնոնովի, ինչպես նաև իտալացի թյուրքագետ Է. Ռոսսիի հետազոտությունները: Կարևոր նշանակություն ունեն նաև Վ.Ա. Գորդլիսկու անդրադարձներն ընդհանուր թեմային, որոնք առավելապես ընդգծում են վիպական ստեղծագործության ձևավորման միջավայրի և ժամանակահատվածի հարցը:

«Քյոռոզլի» էպոսի առնչությամբ աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն Ա. Խոճկոյի, Ի. Շոպենի, Ա. Ֆոն Հաքստհաուզենի, Ժ. Դյումեզիլի, Բ. Կ. Կար-

րինի, Փ. Ն. Բորաթավի և Խ. Հ. Կորոզլու հետազոտությունները, էպոսի զանազան ազգային տարբերակների առնչությամբ օտարազգի մասնագետների իրականացրած ուսումնասիրությունները: Հայկական տարբերակի առնչությամբ կարևորվում է բանահավաք Գ. Թարվերդյանի 1912 թ. գրառած ամբողջական շարքը, այն է՝ Խոյ-Սալմաստի (Ուրմիայի) բարբառով 1941 թ. հրատարակված տարբերակը («Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն»), Խ. Մամուլեյանի ծավալուն վերլուծությամբ [4, էջ 5-23]: Այն իրական ժողովրդական ստեղծագործության նմուշ է՝ անկրկնելի բարբառային լեզվով, որն իր հերթին ստեղծում է յուրահատուկ ազգային միջավայր: Անկախ մյուս ազգային, հատկապես, էպոսի արևմտյան խմբի տարբերակների հետ ակնառու բովանդակային ընդհանրություններից՝ տարբերակն իր հիմնական բաղադրիչներով, իրավամբ, կարելի է համարել հայ բանահյուսության եզակի ստեղծագործություն: Հայկական պատումների առանձնակի վերլուծությամբ ժամանակին զբաղվել է նաև բանասեր Հ. Հարությունյանը:

Թյուրքական երկու էպոսների պարագային կարևորվում են հայ բանագետների և թյուրքագետների առանձին անդրադարձները թեմային (Հ. Պերպերյան, Ս. Ահյան, Ա. Պետրոսյան, Ա. Սաֆարյան, Ռ. Մելքոնյան ևն):

ԵՊՀ-ում, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ բոլոր այն բուհերում, որտեղ դասավանդվել են թյուրքագիտական առարկաներ, թյուրքական էպոսների առումով, դեռևս 1970-ական թվականներից սկսած, կիրառվել է Մոսկվայի պետական համալսարանի հրատարակած «Արևելքի գրականությունը միջին դարերում» դասագրքի 2-րդ հատորը՝ թյուրքագետ-գրականագետ Ի. Վ. Բորովինայի հեղինակած թուրք գրականության բաժնով: Ներկայումս թյուրքական էպոսների դասավանդում իրականացվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի բակալավրիատի 3-4-րդ կիսամյակներում «Թուրք գրականության և մշակույթի պատմություն. 13-18-րդ դդ.» առարկայի շրջանակում (ժամաքանակը՝ 60 ժամ):

Հիմնական նյութի շարադրանքը: Թյուրքական էպոսներն անցել են ձևավորման բավական երկար ժամանակահատված, ընդ որում՝ տարբեր աշխարհագրական միջավայրերում:

«Դեդե Քորքուր» («Քիթաբի Դեդեմ Քորքուր» կամ «Քորքուր պապիս գիրքը») էպոսն սկսել է ձևավորվել Կենտրոնական Ասիայում, ըստ այդմ՝ դրա առաջին 4 գլուխներում գործողություններն ընթանում են զուտ կենտրոնասիական միջավայրում: Սակայն թյուրք-օղուզական ցեղերի՝ դեպի Փոքր Ասիա առաջխաղացման արդյունքում, 5-րդ գլխից սկսած, էպոսի աշխարհագրական միջավայրը փոխադրվում է Հայկական լեռնաշխարհ, որտեղ էլ ընթացել է դրա վերջնական ձևավորումը: Ակնհայտ է, որ էպոսում արձանագրված տեղանունները մեծ մասամբ առնչվում են Հայկական լեռնաշխարհին, ըստ այդմ՝ էպոսը չէր կարող ձևավորվել դրանից դուրս մեկ այլ միջավայրում [8, էջ 115-116]: Մասնավորապես, նշվում են Բայբուրթը (Բաբերդը), Ալընջան (Երնջակը՝ Նախիջևանում),

Շարուրը, Փասենգը (Բասեն), Օնիկը (Ավնիկը՝ Կարնո շրջանում), Սուրմալին (Սուրմառի), Գյանջան (Գանձակ), Բարդան (Պարտավ) ևն:

«Դեղե Քորքուրթի» կարևոր առանձնահատկությունն է առնվազն երկու գրավոր բնագրով՝ Դրեգդենի ու Վատիկանի ձեռագրերով պահպանված լինելու հանգամանքը, ընդամին, երկուսն էլ թվագրվում են XVI դարավերջով: Ընդհանուր առմամբ, Էպոսը բաղկացած է ներածությունից, 12 գլխից կամ օղուզամեծից (չշփոթել համանուն այլ արևելյան ստեղծագործությունների հետ): Դրեգդենի ձեռագիրը ներառում է Էպոսի ամբողջական շարքը, իսկ Վատիկանի ձեռագիրը՝ ընդամենը 6 գլուխ: Բացի այդ՝ XIX-XX դարերում Կենտրոնական Ասիայում և Թուրքիայում գրառվել են բանավոր ավանդված, Էպոսին առնչվող զանազան նյութեր՝ առանձին պատումներ, ավանդազրույցներ, հեքիաթներ:

Էպոսի գլուխներից 9-ը վերաբերում են «անհավատների» քրիստոնյաների դեմ օղուզների մղած պատերազմներին: 5-րդ ու 6-րդ գլուխները հստակորեն առանձնանում են ընդհանուր օղուզական շարքից և վստահաբար ավելի ուշ ծագում ունեն, ձևավորվել են Փոքր Ասիայում օղուզական ցեղերի վերաբնակվելուց հետո [8, էջ 140]: Ակնհայտ է, որ, մասնավորապես, Դոմրուլի (Դելի Դոմրուլ) մասին գլուխը թյուրքական Էպոսի հետ օրգանական կապ չունի և ավելի ուշ շրջանի հավելում է [8, էջ 110]: Ընդամին, Դոմրուլի մասին գրույցն իր հիմնական տարրերով կրկնում է «Ասլան-աղա» («Կագուան Ասլան») հայկական միջնադարյան վիպերգի մոտիվները, մասնավորապես, հրեշտակամարտի ու հերոսի կնոջ՝ ամուսնու համար ինքնագոհաբերության մոտիվների առումով: Վերջին մասով առավել դրսևորվում է, այսպես կոչված, «Ալկեստիսի մոտիվը»՝ հայտնի դեռևս հին հունական առասպելաբանությունից (առավել տարածված Եվրիպիդեսի մշակմամբ): Եվրոպական գիտական շրջանակների գնահատմամբ, թյուրքական տարբերակն ամենամոտն է հայկականին, ինչը զարմանալի չէ, քանի որ օղուզներն իրենք վերաբնակվել և հաստատվել են Հայկական լեռնաշխարհում [11, էջ 234]:

Մեկ այլ կարևոր հանգամանք է Էպոսի 6-րդ գլխում օղուզների հակառակորդ Տրապիզոնի և Բաբերդի տիրակալ Թագավորի (Tagavor) կերպարի առկայությունը, որը վկայում է հայերի և թյուրքերի վաղ շրջանի շփումների մասին: Միևնույն կերպարն այլ տեղերում հանդիպում է նաև Սև Թագավոր (Kara Tagavor կամ Kara Tekfur) անվամբ, ինչը թյուրքական վիպական ավանդության մեջ հայ իշխանավորի կերպարի արտացոլումն է: Թեման ունի առավել ծավալուն ուսումնասիրման ու լուսաբանման միտումներ ու հեռանկարներ, որոնք առաջիկային կդիտարկվեն այլ գործնական հարթությամբ:

Հայտնի է Կեսարիայում գրառված հայկական պատումն Էպոսի հերոսներից Բամսը Բեյրեքի (Բեյբոյրեք) մասին, որը հրատարակվել է դեռևս 1898 թ., իսկ 1928 թ. հայագետ Ֆ. Մակլերի կողմից թարգմանվել և հրատարակվել է ֆրանսերեն որպես հայկական ժողովրդական հեքիաթ: Բամսը Բեյրեքի մասին գրույցները տարածված են եղել նաև Բաբերդի հայերի շրջանում, Էպոսի հայկական աղերսների մասին են նշել Է. Ռոսսին և Վ. Մ. Ժիրմունսկին [8, էջ 208-

209]: Ըստ ամենայնի, Էպոսի պատումները տարածված են եղել նաև Կոնիայի հայերի շրջանում, մասնավորապես Վ. Ա. Գորդլիսկու հաղորդմամբ, Էպոսի մի տարբերակ գրառվել է Բեյշեհիր քաղաքի բնակիչ հայ բանասացից [5, էջ 127]:

«Քյոռոլլի» («Քյոռոլլու») Էպոսը, XVII դարի ստեղծագործություն լինելով, լայն ընդունելության է արժանացել ոչ միայն թյուրքալեզու, այլև ամենատարբեր ազգերի շրջանում՝ Տյան-Շանից մինչև Բալկաններ, Կասպից ծովից մինչև Սիբիր: Էպոսի ձևավորումն սկսվել է XVII դարից, և մինչև XX դարասկիզբը այն ենթարկվել է գեղարվեստական տարաբնույթ մշակումների ու փոփոխությունների՝ դառնալով լեզվական ու էթնիկ սահմանների հաղթահարման եզակի օրինակ [9, էջ 317]: Հիմնականում ասացողների կողմից ավանդվելով՝ այն սկսել է գրառվել XIX դարի առաջին կեսից մինչև XX դարի սկզբները, իսկ Կենտրոնական Ասիայում տարածված պատումները՝ առավելապես XX դարի կեսերին և ավելի ուշ [7, էջ 43]: Էպոսի բազմաթիվ տարբերակները, ընդհանուր մոտիվներ և խորքային ընդհանրություններ ունենալով հանդերձ զգալիորեն ազգայնացված և տեղայնացված են, ունեն իրենց բնորոշ առանձնահատկություններն ու պյուժետային տարբերակիչ գծերը [6, էջ 217-218]: Մինչ այժմ գրառված և հրատարակված զանազան տարբերակներն ընդունված է բաժանել երկու խմբի՝ արևմտյան ու արևելյան:

Արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թուրքական, ադրբեջանական, հայկական, վրացական, դաղստանյան, քրդական ևն) հիմնականում հանգում են ատրպատականյան «Քյոռոլլու» Էպոսին, ինչպես գտնում է հետազոտողների մեծամասնությունը: Դրանք, հիմնավորապես պահպանելով պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից, համեմատաբար ճշմարտացիորեն են վերարտադրել Փոքր Ասիայում XVI- XVII դարերում տեղի ունեցած իրադարձությունները, այն է՝ ջալալիների (ջելալիների) ապստամբությունները, որոնք մոտ 20 տարի ցնցել են Օսմանյան կայսրությունը:

Արևմտյան խմբի բոլոր տարբերակներում «Քյոռոլլի» մականվամբ հայտնի Ռուշանը հանպատրաստից բանաստեղծ-երաժիշտ (աշուղ) է, որը, իր նման վրիժառուների գլուխն անցած, վրեժ է լուծում հորը հանիրավի կուրացրած բռնակալ իշխանավորներից (այստեղից էլ «Քյոռոլլի» մականունը, իմա՝ «կույրի որդի»), վարում Ռոբին Հուդի կարգի «ազնվաբարո ավագակին» բնորոշ կյանք՝ պատուպարվելով լեռնային Չամլիբել ամրոցում: Վերոհիշյալ խմբի տարբերակները հիմնականում զերծ են առասպելական ու հեքիաթախառն գծերից, որն էլ ինքնըստինքյան վկայում է կայուն պատմական հիմքի առկայության մասին:

Արևելյան խմբի տարբերակներում (թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, դազախական, կարակալպակյան, Բուխարայի արաբների, տոբոլ-թաթարական, ույդուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավավերական ատաղձն ամբողջությամբ անհետանում է՝ իր տեղը զիջելով վաղնջական հեքիաթախառն ու նախախլամական տարրերով հավելված գրույցների շարքին և

իրանական առասպելաբանությանը: Ընդամին, եթե արևմտյան խմբի տարբերակներում կույրի որդու առասպելային է առաջնային և հիմնարար, ապա արևելյան խմբի տարբերակներում առավելապես գերիշխում է, այսպես կոչված, «գերեզմանի որդու» (Գյոռոլի, Գուրուզլի, Գուրգուլի) առասպելայինը: Դրանցում Քյոռոլին (Գյոռոլին) արդարության խորհրդանիշ առասպելական Չանդրբիլ երկրի կառավարիչն է (ըստ էության, կելտական-բրիտանական բանահյուսության Արթուր թագավորի կարգի), պատերազմում է դևերի ու վիշապների դեմ, ընկնում ստորգետնյա աշխարհի և դուրս ելնում: Տաջիկական և թուրքմենական պատումների շարքը հինգ տարբեր անվանում ունի, որոնցից երեքը հանգում են «գերեզմանի որդի» տարբերակին, մեկը՝ «կույրի որդի» («Գուրուլի»), իսկ մյուսը՝ իր նախադեպը չունեցող յուրօրինակ «խուլի որդի» տարբերակին («Գարավլի»): Ղազախական, կարակալպակյան, տոբոլ-թաթարական (սիբիրյան թաթարների) տարբերակներն ավելի ուշ ժամանակների ծնունդ լինելով՝ ծագումնաբանորեն հանգում են ուզբեկական «Գոռոլուն»: Տաջիկական «Գուրուզլի» («Գուրգուլի») չափածո էպոսն իր ինքնօրինակ հորինվածքով առանձնանում է արևելյան խմբի տարբերակներից: Թուրքմենական «Գյոռոլին», հետազոտողների մի մասի կարծիքով, միջանկյալ օղակ է երկու խմբերի միջև՝ ընդհանուր գծեր ունենալով ինչպես տաջիկական, այնպես էլ ատրպատականյան տարբերակի հետ:

Հատկանշական է, որ կայուն պատմագրական ավանդույթ ունենալով՝ XVII- XVIII դարերում հայ մատենագրության մեջ պահպանվել են եզակի վկայություններ ինչպես Քյոռոլու, այնպես էլ էպոսի տարբերակներում որպես նրա զինակիցներ հանդես եկող կերպարների պատմական նախատիպերի մասին: Թեմայի շրջանակում արժեքավոր են Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Դարանադցու, Երեմիա Քյոմուրճյանի և մանր ժամանակագիրների հաղորդումները: Համեմատության համար նշենք, որ անհրաժեշտ բավականաչափ տեղեկություններ օտար աղբյուրներում չեն հանդիպում: Նմանապես XVIII դարի մատենագիր Եղիա Մուշեղյանի տաղարանն իր հարակից մեկնաբանություններով և հայատառ թյուրքերեն (թյուրքի) գրառված 13 խաղերով ցայսօր էլ Քյոռոլու մասին զրույցներ և երգեր պարունակող տեքստերից հնագույնն է: Քյոռոլու մասին տեքստերի գրառումն ու ուսումնասիրումը սկզբնավորվում է հենց դրանով [1, էջ 71-93]:

Էպոսի առանձին պատումներ և հատվածներ առաջին անգամ գրառվել են Ռուսական կայսրության տարածքում: Մասնավորապես, հայտնի է Հայկական մարզի տարածքում (Նախիջևան) թյուրքալեզու աշուղից հայ թարգմանչի միջնորդավորմամբ ռուսաստանցի հետազոտող Իվան Շոպենի 1830-ական թթ. կատարած գրառումը [10, էջ 12-25], որը, այնուամենայնիվ, ամբողջական և հավաստի չէ: Էպոսի առաջին ամբողջական տարբերակն Իրանի Ատրպատական (Ադրբեջան) երկրամասում 1830-ական թթ. գրառել է ռուսաստանցի լեհ արևելագետ Ալեքսանդր Խոճկոն [12, էջ 17-344]:

Էպոսի առաջին իսկ հրատարակված և հետագա տարբերակներում ի հայտ են եկել հայկական ենթաշերտին առնչվող դրվագներ, որոնց հիմնավորմամբ Քյոռոզլին կերպավորվել է որպես հայության նկատմամբ դրական տրամադրված կամ առնվազն քրիստոնյաների պաշտպան: Ընդամին, էպոսի կենտրոնասիական որոշ տարբերակներում էլ Քյոռոզլին հաճախ է հանդես գալիս որպես քրիստոնյաների պաշտպան և բարեկամ: Մեր ուսումնասիրության արդյունքներով, հակառակ Ա. Խոճկոյի հրատարակության համապատասխան հասկացումների, հայության հետ կապված եզակի հիշատակությունները, ընդհանրապես, բացակայում են Ս. Ս. Պեննի 1856 թ. ռուսերեն թարգմանության մեջ: Ընդամին, երկու դեպքում դրանք կամայականորեն փոխարինվել են ընդհանուր քրիստոնեական բնույթով, մյուս երկու դեպքում՝ մահմեդական: Ակնհայտ է, որ ռուսերեն թարգմանությունն Ա. Խոճկոյի սկզբնաղբյուր տեքստի ճշգրիտ պատկերը ոչ միայն չի արտացոլում, այլև կրել է իմաստի ու ձևի, ինչպես նաև հայկականության հետ կապված տեղեկատվության կորուստներ: Ըստ այդմ՝ հետագա գիտական ուսումնասիրությունների համար այն առնվազն որպես սկզբնաղբյուր այլևս չի կարող դիտարկվել: Ինչպես հայկական, այնպես էլ Ռուսական կայսրության և ԽՍՀՄ գիտական-գրական շրջանակների համար հակագիտական նման մոտեցումը միանգամայն աննկատ է մնացել, քանի որ ռուսերեն թարգմանված տարբերակը, բնականաբար, առավել հասանելի է եղել և հիմք հանդիսացել հետագա ուսումնասիրությունների համար:

Ի տարբերություն «Դեդե Քորքուջի»՝ «Քյոռոզլու» արևմտյան խմբի հիմնական տարբերակների ձևավորումն ամբողջությամբ ընթացել է Հայկական լեռնաշխարհի տարածքում և որոշ հարակից շրջաններում, ինչի մասին են վկայում զանազան տարբերակներում արձանագրված աշխարհագրական տեղանունները: Հատկանշական է նաև, որ «Քյոռոզլին» միակ թյուրքական էպոսն է, որում գլխավոր հերոսը կրում է հստակ հնդեվրոպական ծագում ունեցող անուն՝ Ռուշան, պրսկ.՝ «լուսավոր», «պայծառ», Առուշան կամ Ուռուշան՝ Խոյ-Սալմաստի բարբառով գրառված և միակ հրատարակված հայկական տարբերակում, Առշամ՝ Վանա բարբառով գրառված անտիպ տարբերակում [4, էջ 19]:

Էպոսի հիմքում ակնհայտ է «կույրի որդու» հնագույն առասպելային (mythologem) առկայությունը, ինչն արձանագրված է Իլլույանկայի մասին խեթական առասպելում, Հերոդոտոսի կողմից ավանդված կույրերի որդիների մասին սկյութական գրույցում, Փալստոս Բուզանդից ու Մովսես Խորենացուց ավանդված «Պարսից պատերազմ» հերոսավեպում ևն [13, էջ 50-74]: Ակնհայտ է, որ «կույրի որդու» հայկական և թյուրքական տարբերակներում առասպելային նույնական է. երկու դեպքում էլ գլխավոր հերոսների՝ Արշակ Բ և Ռուշան-Քյոռոզլու հայրերը կուրացվում են հրեղեն նժույգների պատճառով, և երկու դեպքում էլ որդիները մինչև իրենց կյանքի վերջը պայքարում են բռնակալ հակառակորդների դեմ [3, էջ 14-15]:

Հայկական վիպական ենթաշերտը դրսևորվում է նաև էպոսի տարբերակներում որոշ կերպարների առկայությամբ, որոնց որոշակի դեպքերում վե-

րագրվում է հայկական ծագում: Առավել հիշատակելի են Քաչալ Համգայի կերպարը, որն առկա է նաև հայ բանահյուսության մեջ, Ֆրանկի կամ Եվրոպացու կերպարը, որն ընդհանրապես բնորոշ չէ թյուրք վիպական ավանդույթին և ունի ծագումնաբանական այլ արմատներ: Որոշակիորեն հայոց վիպական ավանդույթի հետ են կապվում նաև հերոսի ձիու և սպառազինության (կայծակե թուր) բաղադրիչները, որոնք դրսևորվում են արևմտյան խմբի տարբերակներում: Տարածաշրջանում XVI-XVII դարերում հայ վաճառականության խաղացած բացառիկ դերակատարությունն է արտացոլվել Էրմենի Բեզիրգենի կամ ուղղակի Բեզիրգենի (վաճառականի) կերպարով, որն առկա է ոչ միայն արևմտյան, այլև արևելյան խմբի տարբերակներում: Վերջին դեպքում, մանավանդ թուրքմենական պատումներում վաճառականի հայկականությունը փոխարինվել է ընդհանուր կովկասյան ծագմամբ: Օսմանյան կայսրությունում, հատկապես քրիստոնյա հպատակների նկատմամբ գործադրված մանկահավաքների (դեշիրմե) իրողություններն են արձանագրված Քյոռոլլու կողմից առևանգված (որդեգրված) պատանիների կերպարներով՝ մսագործի որդի Այվազ, դարբնի որդի Հասան, որոնք Արևմտյան Հայաստանի տարածքում գրառված որոշ թուրքական պատումներում որպես հայ են ներկայացվում:

Հայկական կերպարներ են բացահայտվում նաև Թուրքիայում համեմատաբար վերջերս գրառված էպոսի պատումներում, որոնցից հիշատակելի են Հայ թագավորի և Օլթիի կառավարիչ Հայ գորավարի (Էրմենի փաշա) կերպարները: Բոլոր դեպքերում էլ հայկական կերպարներին հակադրվում են սեփական վիպական հերոսները, թեև ակնհայտ է, որ իշխանավորների, իմա՝ պետականության առկայության պայմաններում նրանք բավական խոցելի են դառնում՝ հանդես գալով որպես ավագակապետեր և դրսեկ քոչվոր առաջնորդներ:

Ի վերջո, հայկական գիտական շրջանակների համար ուղենիշային կարող է դիտարկվել Ժամանակին ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկու առաջադրած վարկածը, որի համաձայն՝ ուշադիր քննությունը կարող է բացահայտել քրիստոնեական-փոքրասիական (հայկական) պոեզիայի ազդեցությունը Դեդե Քորքուրի և Քյոռոլլու մասին ստեղծագործություններում [5, էջ 265]:

Հարկ է նշել, որ 1930-ական թթ. Հայկական ԽՍՀ-ում իրականացվել են «Քյոռոլլի» էպոսի հայկական պատումների հայտնաբերման, գրառման և ուսումնասիրման աշխատանքներ, որոնք ակադեմիական մակարդակով են փորձաքննության ենթարկվել: Մինչև 1941 թվականը գրառվել են Խոյ-Սալմաստի (Ուրմիայի), Բաշկալայի, Վանի, Մոկաց, Էրզրումի, Վաղարշապատի, Կոտայքի, Դարալագյազի բարբառներով տարատեսակ պատումներ, որոնց մի մասը պատրաստվել է հրատարակության: Առկա գնահատականների համաձայն՝ առնվազն Վանի և Մոկաց բարբառներով պատումները ամենաընդգծված հայ ազգագրական նյութերն են, որոնցում ընդգրկված են «Մասնա ծոեր» ազգային էպոսին բնորոշ վիպական-բանահյուսական տարրեր [4, էջ 18-19]: «Քյոռոլլու» պատումներ գրառվել են նաև արդի Ժամանակահատվածում, վերջերս մեր կողմից առանձին ուսումնասիրության առարկա է եղել արցախյան պա-

տումների շարքը: Ընդ որում, պատումների մի մասն Արցախում գրառվել է դեռևս 1963-1964 թթ., իսկ վերջին հայտնաբերվածները՝ 2023 թ.: Ներկայումս կազմավորված ՀԱԻ գիտական խմբի ուժերով սկսվել են էպոսի հայկական պատումների քննության ու համահավաք ժողովածուի կազմման աշխատանքները:

Ինչպես «Դեղե Բորքուրթի», այնպես էլ «Քյոռոլլու» պարագային պարզորոշ ընդգծվում է դրանց տարածվածության լայն շառավիղը, ինչը մասամբ պայմանավորված է թյուրքական ժողովուրդների աշխարհագրական միջավայրով, ոչ թյուրքական ժողովուրդների հետ կապակցված որոշ պատմամշակութային իրողություններով ու կապերով: Դասընթացի կարևորագույն վերջնարդյունքը պետք է լինի նաև էպոսների ազգային տարբերակների ներկայացումը, մասնավորապես, վերջերս առավել ծավալման միտումներ դրսևորող ծայրահեղ մոտեցումների՝ առնվազն հայկական գիտաուսումնական միջավայրում դրանց գեներացման կանխարգելման նպատակով: Եվրոպական գիտական շրջանակներում ժամանակին քննադատվել են տվյալ էպոսները որևէ թյուրքալեզու ժողովրդի վերագրելու, դրանք որպես «ազգային հանճարի և ոգու» արտահայտություն ներկայացնելու ազգայնական ու ազգայնամոլական փորձերը: Դեռևս Վ. Մ. Ժիրմունսկին է շեշտել, որ «Քյոռոլլու» («Գյոռոլլու») ազգային տարբերակների համեմատական վերլուծության արդյունքներով բովանդակության ընդհանուր ավանդականության ֆոնին դրանցից յուրաքանչյուրն ունի իր ազգային դեմքը, արտացոլում է այն ստեղծած ժողովրդի պատմականորեն առաջացած ընկերային կենսաձևը, հոգեբանությունն ու հասարակական իդեալները, ըստ այդմ՝ ստեղծագործական ազգային յուրաքանչյուր տարբերակն իրավամբ պատկանում է այն ստեղծած ժողովրդին [6, էջ 217-218]: Բնականաբար, էպոսների ազգայնացման ներկա միտումները դրանց համաթյուրքականության բնույթի՝ դեռևս Զիա Գյոքալփի առաջադրած «օղուզական աշխարհի մատյանների» որոշակիորեն ավանդական ընդգծմանը հակառակ մեկ այլ համեմատաբար նոր ծայրահեղ մոտեցում են արտացոլում՝ այդ առումով կրելով հիմնականում տեղայնացված բնույթ: Մակայն արդի աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված հակագիտական տնաբույս տեսություններն ու առանձին թեզեր արդեն սկսել են ակտիվորեն ներթափանցել և շրջանառվել նաև ժամանակի հռչակավոր եվրոպական ակադեմիական կենտրոններում, ինչը, անշուշտ, գիտությանն ու գիտականությանը որևէ կապ չունեցող լոբբիստական գործունեության արդյունք է:

Միով բանիվ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնում թյուրքական էպոսների դասավանդումն առանց համապատասխան հայկական նյութի վերհանման և հայ-թյուրքական աղբյուրների ներկայացման չի կարող լիարժեք բնույթ կրել: Միանշանակորեն կարելի է արձանագրել, որ հիմնականում հենց դրանով է պայմանավորված դասընթացի հայաստանյան դասավանդման ամենագլխավոր առանձնահատկությունը, ինչը կարող է կիրառվել նաև արտաքին լսարանում և միջբուհական համագործակցության շրջանակում:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, որ թյուրքական էպոսները՝ իրենց ամենատարբեր ազգային տարբերակներով ու առանձին պատումներով, բավականին ճյուղավորված են, հետևաբար պետք է խուսափել կոնկրետ տարբերակներին բնորոշ «հայկական նյութի» անհիմն ընդհանրացումից և հնարավոր տեղական ծայրահեղ այլ մոտեցումներից՝ դասավանդման ընթացքում հիմնական շեշտը դնելով բուն թյուրքական վիպական ստեղծագործությունների ներկայացման ու ուսուցման վրա:

Ակնկալվող դրական վերջնարդյունքը հեռանկարում կարող է կայուն հիմք դառնալ թյուրքական այլ հայտնի էպոսների ուսուցման ու միննույն կրթական ծրագրերում ընդգրկման համար՝ այդկերպ առավել բյուրեղացնելով ու ընդհանրացնելով թեման: Մասնավորապես, առաջին հերթին, կարելի է նկատի առնել «Ասք Մելիք Դանըշմենդի մասին» վիպական ստեղծագործությունը, որն ամբողջությամբ Հայկական լեռնաշխարհում ստեղծված ու ձևավորված թյուրքական էպոս է, պարփակում է առավել շեշտված ու ակնհայտ հայկական ենթաշերտ: Ըստ այդմ՝ հարցի հետագա արծարծումն ու ուսումնասիրությունը կրկին կարող են կրել միջգիտակարգային բնույթ՝ առավել կարևորելով նաև հայագիտության հիմնախնդիրները:

Հեռանկարում կարող է առաջ քաշվել նաև թյուրքական էպոսների մասով առանձին ուսումնական ձեռնարկի կազմման հարցը, ինչն իր հերթին լավագույնս կնպաստի հայկական թյուրքագիտության ծրագրերի իրականացմանը:

Եզրակացություն և եզրահանգիչ դրույթներ: Ընդհանուր առմամբ, դասընթացի նպատակներն են.

- թյուրքագետ ուսանողներին ծանոթացնել թյուրքական և այլ ժողովուրդների շրջանում տարածված վիպական ավանդությանը,

- ծանոթացնել թյուրքական հայտնի էպոսներին, դրանց առանձնահատկություններին, մասնավորապես հայ-թյուրքական աղերսների համատեքստում,

- ցույց տալ տվյալ էպոսների փոխառնչությունները հայոց վիպական ստեղծագործությունների հետ:

Դասընթացը կարող է բաղկանալ հետևյալ հիմնական բաժիններից.

- 1-ին բաժնում ներկայացվում են «Դեղե Քորքուր» թյուրքական էպոսի հիմնական բովանդակությունը, ձևավորման միջավայրը,

- 2-րդ բաժինը վերաբերում է էպոսի հայկական աղերսներին,

- 3-րդ բաժնում ներկայացվում է «Քյոռօղլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակների հիմնական բովանդակությունը,

- 4-րդ բաժնում՝ «Քյոռօղլի» էպոսի արևելյան խմբի տարբերակների (թուրքմենական, ուզբեկական, դազախական, տաջիկական, ույղուրական) հիմնական բովանդակությունը,

- 5-րդ բաժնում՝ էպոսի հայկական պատումների հիմնական բովանդակությունն ու դրանց առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն.

- ներկայացնելու առավել հայտնի թյուրքական էպոսների առանձնահատկությունները,

- նշելու հայ-թյուրքական վիպական առնչությունները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ.

- տիրապետելու թյուրքական վիպական ավանդության մասին անհրաժեշտ տեղեկատվության,

- ճանաչելու դրան խարսխված թյուրքական ժողովուրդների էթնիկ հոգեկերտվածքի առանձնահատկությունները,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ.

- մասնակցելու համապատասխան թեմաներին առնչվող քննարկումներին:

Դասընթացը կարող է ձևավորել կրթական ծրագրի որոշակի վերջնարդյունք, մասնավորապես ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

- ներկայացնել տարածաշրջանի հիմնական թյուրքական էպոսները,

- վերլուծել և գնահատել մշակութային փոխառնչությունները, մասնավորապես վիպական բանահյուսության առումով,

- պատրաստել գիտական զեկուցումներ, ներկայացնել հետազոտություններ, վարել գիտական բանավեճեր, տրամադրել մասնագիտական խորհրդատվություն:

Կիրառելի են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները՝

- դասախոսություն, սեմինար պարապմունքների անցկացում,

- յուրաքանչյուր բաժնի ավարտից հետո քննարկման կազմակերպում,

- ուսանողների կողմից՝ հանձնարարված գրականության ընթերցում, տեսաբանախոսությունների պատրաստում, մասնակցություն քննարկումներին:

Այսպիսով, նկատի առնելով նշված խնդիրները և առկա հանգամանքներով պայմանավորված դասընթացի առանձնահատկությունները՝ հարկ է դասընթացը դիտարկել որպես առանձին թեմա, քանի որ թյուրքագիտության համար այն կրում է կարևոր ու հիմնարար բնույթ:

THE SPECIFICITIES OF TEACHING TURKIC EPICS (“DEDE KORKUT” AND “KOROGLU”) AT THE TURKIC STUDIES DEPARTMENT OF YSU

Ramazyan Samvel

Ph.D. of Philology, Assistant

Yerevan State University

Institute of Archaeology and Ethnography of the NAS,

Republic of Armenia

samvel.ramazyan@ysu.am

Summary

Since the establishment of the Department of Turkic Studies at the Faculty of Oriental Studies of Yerevan State University, a certain place has been devoted to the study and teaching of Turkic epics, which has been carried out within the framework of teaching Turkish literature.

Any national epic can certainly form the basis of literature. From this perspective, Turkic epics have had a significant impact on the process of establishing the literature of the Turkic-speaking peoples, taking into account the centuries-old tradition of oral speech and culture. At the same time, they still continue to condition the process of national cultural and identity formation among some Turkic-speaking peoples, while serving as unique national symbols. In particular, “Dede Korkut”, being the ethnogenic epic of various Turkic ethnic groups, still plays a crucial role in popularizing the ideology of Pan-Turkism, naturally, sometimes through the artificial equalization and identification of various national versions. The “Koroglu” (“Keroglu”) epic, created and formed in a later period, taking into account the existence of a larger number of national versions, no longer has the symbolic pan-Turkic significance attributed to “Dede Korkut”. However, in some cases, it also contains elements of national self-identity, and is sometimes considered on the same plane.

From the above-mentioned points of view, in particular, for Armenian Turkology, the study of not only the mentioned but also other Turkic epics and the establishment of teaching with the appropriate methodology represent a necessity, which can certainly have scientific and practical significance.

The article was prepared based on a summary of the results of our research conducted on the topic in recent years, as well as the conclusions and observations made during the process. One of the notable problems with the topic is its presentation without highlighting the Armenian environment and Armenian epic substratum, which is typical of foreign Turkic studies centers, but in our case, taking into account the existing peculiarities and already recorded results, the use of the same approach is not correct and effective. In this context, knowledge of Turkic languages, as well as certain knowledge of Armenian folklore, is important. Accordingly, the subject can certainly have interdisciplinary significance.

By highlighting the specificities of the topic and the problems identified, the methodological approaches considered necessary for teaching the course are presented. As a result of teaching the subject, the Turkologist student can further strengthen such skills as deep knowledge of the topic, comprehensive analysis and comparison of various data.

Keywords: *Turkic epic, Turkology, “Dede Korkut”, “Koroglu”, Armenian Highland, teaching, specificities and methods.*

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ТЮРКСКИХ ЭПОСОВ («ДЕДЕ КОРКУТ» И «КЁРОГЛЫ») НА КАФЕДРЕ ТЮРКОЛОГИИ ЕГУ

Рамазян Самвел

Кандидат филологических наук, ассистент

Ереванский государственный университет

Институт археологии и этнографии НАН

Республика Армения

samvel.ramazyan@ysu.am

Аннотация

С момента основания кафедры тюркологии на факультете востоковедения ЕГУ определенное место отводилось изучению и преподаванию тюркских эпосов, которое осуществлялось в рамках преподавания турецкой литературы.

Любой национальный эпос, безусловно, может быть основой литературы. С этой точки зрения тюркские эпосы оказали большое влияние на процесс становления литературы тюркоязычных народов с учетом многовековой традиции устной речи и культуры. В то же время они продолжают обуславливать процесс формирования национальной культуры и идентичности у некоторых тюркоязычных народов, являясь уникальными национальными символами. В частности, «Деде Коркут», будучи этногоническим эпосом разных тюркских этносов, до сих пор играет важную роль в популяризации идеологии пантюркизма, естественно, иногда и путем искусственного нивелирования и идентификации различных

национальных версий. Эпос «Кёроглы», созданный и сформировавшийся в более поздний период, уже не имеет символического пантюркского значения, приписываемого «Деде Коркут», но в ряде случаев включает в себя и элементы национального самопознания, а иногда рассматривается и на одном уровне.

С вышеизложенных точек зрения, в частности, для армянской тюркологии необходимо изучение не только упомянутых тюркских эпосов, но и других эпосов, и внедрение в преподавание соответствующей методики, что, безусловно, может иметь научное и практически-прикладное значение.

Статья подготовлена на основе обобщения результатов наших исследований, проведенных по данной теме в последние годы, выводов и наблюдений, сделанных в ходе них. Одной из заметных проблем раскрытия темы является ее подача без освещения армянской среды и армянского эпического субстрата, что характерно для зарубежных тюркологических центров, но в нашем случае, учитывая особенности и уже зафиксированные результаты, использование того же подхода не оправдано и не эффективно. В этом контексте важно знание тюркских языков, а также армянского фольклора. Соответственно, данная тема, безусловно, может иметь междисциплинарное значение.

Учитывая специфику темы и зафиксированных проблем, нами представлены методические подходы, необходимые для преподавания курса. В результате изучения предмета у студента-тюрколога могут укрепиться такие способности, как глубокое знание предмета, умение проводить всесторонний сравнительный анализ различных данных.

Ключевые слова: *тюркский эпос, тюркология, «Деде Коркут», «Кёроглы», Армянское нагорье, преподавание, особенности и методы.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Abrahamyan A., Gabrielyan D., Qyor-Oghlu norahayt yergery // HSSR GA «Teghekagir hasarakakan gitutyunneri», № 9, Yerevan, 1954, ej 71–93.
2. Perperean H., Arshak B ev Qeoroghlu, Tparan Kh. Mathikean, Pariz, 1938.
3. Petrosyan A., Haykakan eposi hnaguyn akunqnery 2, GAA HAI hrat., Yerevan, 2020.
4. Qyor-Oghli, Zhoghovrdakan vipasanuthyun, havaqec yev gri arav G. Tharverdyan, arajabany: Kh. Samuelyani, ArmFAN, Yerevan, 1941.
5. Gordlevskiy V.A., Izbrannye sochineniya. T. III. Izd-vo Vostochnoy literatury AN SSSR, Moskva, 1962.
6. Zhirmunskiy V.M., Narodnyy geroicheskiy epos. Sravnitel'no-istoricheskie ocherki. Goskhudlitizdat, M.-L., 1962.
7. Karryev B.K., Epicheskie skazaniya o Kyor-ogly u tyurkoyazychnykh narodov. Izd-vo AN SSSR «Nauka», Moskva, 1968.
8. Kniga moego deda Korkuta. Oguzskiy geroicheskiy epos. Perevod V.V. Bartol'da. Izd. AN SSR, M.-L., 1962.
9. Raykhl K., Tyurkskiy epos: traditsii, formy, poeticheskaya struktura. «Vostochnaya literatura», Moskva, 2008.
10. Shopen I.I., Ker-oglu. Tatarskaya legenda // Mayak sovremennogo prosveshcheniya i obrazovannosti. Trudy uchenykh i literatorov, russkikh i inostrannykh, ch. I–II, SPb, 1840, s. 127–182.
11. Beekes R.S.P., «You Can Get New Children...». Turkish and Other Parallels to Ancient Greek Ideas in Herodotus, Thucydides, Sophocles and Euripides // Mnemosyne, No. 39, Brill, 1986, p. 225–239.

12. Chodzko A., Popular Poetry of Persia as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Shores of the Caspian Sea. Harrison and Co., Printers, St. Martin's Lane, London, 1842.
13. Dumézil G., Les légendes de «Fils d'aveugles» au Caucase et autour du Caucase // Revue de l'Histoire des Religions, vol. 117, Paris, 1938, p. 50–74

Получено: 25.03.2025

Received: 25.03.2025

Рассмотрено: 28.03.2025

Reviewed: 28.03.2025

Принято: 07.05.2025

Accepted: 07.05.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License